

**ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1921-1923ԹԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵ-
ՐՈՒՄ. ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ***

Արմինե Առստամյան

1921թ. Ադրբեջանի դեկավարությունն ավելի վաճառական կեցվածք ընդունեց Լեռնային Ղարաբաղի հարցում՝ հրապարակայնորեն պահանջելով, որ Լեռնային Ղարաբաղը տրվեր Ադրբեջանին: 1921թ. մայիսի 2-ին Անդրկովկասի հանրապետությունների սահմանները որոշելու համար Կովկասյան Բյուրոն ստեղծել էր հանձնաժողով, որի կազմում էին 2 վրացի, 4 ադրբեջանցի և 1 հայ (Ալ.Բեկզադյան): Հանձնաժողովի անհանաչափ կազմն արդեն վկայում էր, որ Բեկզադյանի կողմից առաջ քաշված տեսակետներն հաճախ հավանության չէին արժանանում: Իրավիճակի սրվածությունից ելնելով՝ հանձնաժողովը անհրաժեշտ համարեց Ղարաբաղի հարցի լուծումը դարձնել օրակարգային: Միաժամանակ Օրջոնիկիձեն և Կիրովը հեռագրեցին Նարիմանովին, որ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս առաջնորդվեն այն սկզբունքով, որ ոչ մի հայկական գյուղ չմիացվի Ադրբեջանին, իսկ ոչ մի ադրբեջանական գյուղ չմիացվի Հայաստանին: Սակայն Ադրբեջանի իշխանությունները, որոնք պանթուրքիզմի ընդհանուր գաղափարախոսության հիմքի վրա համագործակցում էին քեմալականների հետ, Ղարաբաղի հարցում շարունակում էին իրենց նվաճողական կեցվածքը: 1921թ. հունիսի 27-ին հրավիրված Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և ժողկոմխորհի համատեղ նիստում, որտեղ քննության առնվեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանների հարցը, որոշվեց անընդունելի համարել Ալ.Բեկզադյանի հարցադրումն այն մասին, որ, հաշվի առնելով Հայաստանի տարածքային անբարենպաստ վիճակը և «հանուն ընդհանուր համերաշխության, հանուն ամենաանկեղծ բարեկամական փոխհարաբերություններ հաստատելու, որոշ տարածքային զիջումներ կատարել, ընդ որում խիտ հայ բնակչություն ունեցող շրջաններում»[1]: Բեկզադյանի այս հայտարարությունը իսկույն հանդիպեց ադրբեջանցիների խիստ անհամաձայնությանը: Այն, որ ադրբեջանական իշխանությունները, մասնավորապես Նարիմանովը, Լեռնային Ղարաբաղի հարցում առաջնորդվում էին զուտ պանթուրքիստական դիրքորոշումներից ելնելով, փաստվում են հենց հիշյալ հարցերը քննող ադրբեջանցի պատմաբանների կողմից: Այսպես օրինակ՝ ունե հիֆտալիք, մեջբերելով Բեկզադյանի այս հայտարարությունը տարածքային հարցում, նշում է, թե Նարիմանովի վրա ճնշումներ էին գործադրում՝ առաջ բերելով «տարածքային վեճերի լուծման էթնիկական սկզբունքը» և ավելացնում է, թե Խորհրդային Ռուսաստանի կողմից նույն դիրքորոշումը կար նաև 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ Նախիջևանի և Հայաստանի սահմանների հարցը քննարկելու ժամանակ, ինչը հանդիպել էր թուրքական պատվիրակության մերժողականությանն ու բողոքարկմանը, իսկ հիմա Խորհրդային Ադրբեջանն է հանդես գալիս բողոքի հայտարարությամբ: 1921թ. հունիսի 27-ին Քաղբյուրոյի նիստում ադրբեջանական կողմը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ Բեկզադյանի դիրքորոշումն անընդունելի է, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի տնտեսական կախվածությունն Ադրբեջանից, որի շրջանակներում էլ ըստ ադրբեջանական կողմի պետք է լուծվեր

*Հոդվածն ընդունվել է 03.04.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

հարցը: Սա նշանակում է, որ ճիշտ հարցադրումը՝ հարցը դիտարկել էթնիկական տեսանկյունից, ոչ մի հայկական գյուղ չմիացնել Ադրբեջանին և ոչ մի ադրբեջանական գյուղ չմիացնել Հայաստանին, անընդունելի էր նվաճողի անզուսպ կեցվածք ընդունած Ադրբեջանի համար: Հունիսի 27-ի նիստում հայտարարվեց, որ այդ սկզբունքը անընդունելի է իրենց համար և հարցի լուծման միակ տարբերակը ըստ ադրբեջանական կողմի, թե ադրբեջանական և թե հայկական բնակչության լայն զանգվածների ներքաշումն է սոցիալիստական շինարարության մեջ[2]: Այլ կերպ ասած՝ ամբողջ Ղարաբաղը պետք է միացվեր Ադրբեջանին. սա է Ադրբեջանի ակնկալիքը: Այսպիսով՝ արհամարհելով պատմական, էթնիկական, ազգային գործոնները՝ Ադրբեջանն անառարկելիորեն պահանջում էր Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել Ադրբեջանից՝ նրա տնտեսական կախվածությունից ելնելով: Այս ստահող հիմնավորումը զուրկ է ամենապարզունակ իսկ տրամաբանությունից: Տնտեսական կապերից ելնելով՝ ազգային հարց չի վճռվում: Տնտեսական կապեր գոյություն ունեն տարբեր վարչական միավորների միջև, և դա հիմք չէ վճռելու տվյալ միավորների տարածքային պատկանելության հարցը: Այստեղ էլ Նարիմանովը անցավ սպառնալիքների հերթական մեթոդին, այսինքն եթե հարցը չլուծվի հոգուտ Ադրբեջանի, ապա ինքը հետագա անկանխատեսելի հետևանքների համար պատասխանատվություն չի կրում, քանի որ «Ադրբեջանում էլ կարթնանան այնպիսի հակախորհրդային ուժեր, ինչպիսիք դաշակներն են Հայաստանում»: Փաստորեն Նարիմանովը այս սպառնալիքով և ընդունած դիրքորոշմամբ չեղյալ էր հայտարարում ադրբեջանական կողմի նախորդ բոլոր որոշումները, որտեղ խոսք էր գնում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու մասին: Այսպես՝ իր իսկ կողմից 1920թ. դեկտեմբերի 1-ի հայտարարությանն անդրադառնալով, Նարիմանովը նշում է. «Եթե նրանք հիշատակում են իմ հռչակագիրը, ապա այնտեղ տառաջիորեն ասված է հետևյալը. Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշման իրավունք»[3]: Նարիմանովի կողմից իր իսկ հայտարարություններում խուսաճավելու կեցվածքը քիչ անց հողվածում բնության կոնենք: Այժմ հետևենք իրադարձությունների հետագա զարգացմանը:

1921թ. հուլիսի 4-ին իրավիրվեց ՌԿ(Բ)Կ Կոմբյուրոյի արտահերթ պլենում: Նրան մասնակցում էին Օրջոնիկիձեն, Մախարաձեն, Սյասնիկյանը, Կիրովը, Նարիմանովը, Նազարեթյանը և ֆիզատները: Ներկա էր նաև Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմ Ստալինը: Որոշվեց՝ Լեռնային Ղարաբաղը մտցնել Խորհրդային Հայաստանի կազմում, հանրաքվե անցկացնել Լեռնային Ղարաբաղում: Որոշումից անհապի դժգոհ էր Նարիմանովը: Հաշվի առնելով հարցի անհապի կարևորությունը՝ վերջինս պահանջեց վերանայել հուլիսի 4-ի որոշումը: «Նկատի առնելով այն կարևորությունը, որ Ղարաբաղի հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ են համարում վերջնական լուծման համար այն փոխադրել ՌԿ(Բ)Կ կենտկոմ»[4]: Հաջորդ օրը հուլիսի 5-ին որոշումը ապօրինաբար վերաձևվեց հոգուտ Ադրբեջանի, որտեղ ասված էր. ա/ «Ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ ունեցած նրա մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել ԱՄՍՀ սահմաններում՝ նրան տալ մարզային լայն ինքնավարություն՝ ինքնավար մարզի կազմում մտնող Շուշի քաղաք վարչական կենտրոնով»[5]:

բ/ «Հանձնարարել Ադրբեջանի կենտկոմին որոշելու ինքնավար մարզի սահմանները և ներկայացնելու ՌԿԿ Կոմբյուրոյի հաստատմանը»:

զ/ «Կովբյուրոյի նախագահությանը հանձնարարել պայմանավորվելու Հայաստանի Կենտկոմի և Ադրբեջանի Կենտկոմի հետ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիտարի թեկնածուի մասին»:

դ/ «Ադրբեջանի Կենտկոմին՝ պարզել և Կովբյուրոյի հաստատմանը ներկայացնել ինքնավարության ծավալը»[6]:

Հայ պատմագրության մեջ բազմիցս խոսվել է հուլիսի 4-ի հայանպաստ որոշումը հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ փոխարինելու հանգամանքների մասին: Բազմաթիվ հեղինակներ ուժացնում էին Ստալինի բացասական դերը խնդրո առարկա հարցում: Կարծիքների ու տեսակետների միջև քիչ թե շատ միանշանակություն ձևավորվում է Նարիմանովի խաղացած դերի հարցում: Այն, որ հուլիսի 4-ի որոշումը բեկանվեց Նարիմանովի սպառնալիքների ներքո, հեղինակների մեծ մասի տեսակետները միավորվում են: Հարկ է նշել, որ ադրբեջանցի հեղինակները ևս հուլիսի 4-ը 5-ով փոխարինելու հոգուտ իրենց արված որոշման մեջ տեսնում են Նարիմանովի դերակատարությունը և փառաբանում վերջինիս վճռական դիրքորոշումը: Այսպես՝ ուն Ս. Կոչառլին, քննարկելով հարցը, գրում է, թե «Նարիմանովն էր հուլիսի 4-ի անարդար և սխալ որոշման վերանայման նախաձեռնողը»[7], «Եվ եթե չլիներ Նարիմանովի խիստ, սկզբունքային և հետևողական դիրքորոշումը, ապա անկասկած Լեռնային Ղարաբաղը կվերցվեր Ադրբեջանից»[8]: Այդ մասին շեշտվում է ադրբեջանցի այլ հեղինակների մոտ ևս:

Եվ այսպես՝ ակնհայտ է հուլիսի 5-ի որոշման խիստ անօրինական, ապօրինի լինելը՝ հակաժողովրդավարական հիմնավորմամբ: Նախ հուլիսի 4-ի պլենումի նիստում որոշվեց անցկացնել հանրաքվե Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ դրվեց ժողովրդի կամքը հաշվի առնելու գործոնը: Հուլիսի 5-ի որոշման մեջ չկար ոչ մի կետ հանրաքվեի մասին: Լեռնային Ղարաբաղը, ըստ այս որոշման, մտցվում էր Ադրբեջանի կազմի մեջ՝ առանց նրա 94,6% հայ բնակչության կամքը հաշվի առնելու, «հիմնավորելով ստահող տնտեսական կապերով, քննարկման դարձնելով էթնիկական տեսանկյունից մեծամասնության գործոնը»: Հանրաքվեի մասին հարց չկար հուլիսի 5-ի նիստում, քանի որ պարզ էր, Լեռնային Ղարաբաղի մեծամասնություն կազմող հայությունը իր ծայրը կտար Հայկական ԽՍՀ-ի հետ միավորվելուն, ինչը ձեռնտու չէր պանթուրքիզմի հետևորդ նարիմանովյան կլանին: Այս թշնամական պատմագրության ներկայացուցիչները չեն ժխտում և անթաքույց կերպով իրենց աշխատություններում դիտարկում են թուրք-ադրբեջանական կապը և քաղաքական դիրքորոշումը: Պատահական չէ, որ 1921թ. ղարաբաղյան որոշումները քննարկելիս, հաճախ են ադրբեջանցի պատմաբանները կապ տեսնում 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի հետ: Ադրբեջանցի պատմաբաններից մեկը, մեջ բերում է նաև հետևյալ տեսակետը հուլիսի 4-ի որոշման վերանայման կապակցությամբ: (Մեջբերումը՝ Իգոլկինից) «Հեղափոխական Քեմալը ընկերաբար խնդրել է Լենինից, եղբայրական Ադրբեջանին զիջել մի շարք հայկական տարածքներ: Լենինը չէր կարող մերժել բրիտանական իմպերիալիզմի և Անտանտի դեմ պայքարող հերոսական մարտնչողին»[9]: Խորհրդային ղեկավարության կողմից Նարիմանովին աջակցելուց բացի հարկ է հարցը դիտարկել նաև մեկ այլ տեսանկյունից, որի դիրքերում կանգնած է պատմաբան Աշոտ Մելքոնյանը:

Այսպես՝ վերջինս կապ է տեսնում Կովբյուրոյի հուլիսի 5-ի և հուլիսի 7-ի նիստերի և ընդունված որոշումների մեջ: Հուլիսի 7-ի նիստում Կովբյուրոն անդրադարձավ Հայաստանի ու Վրաստանի ՍԽՀ-ների միջև վիճելի համարվող Լոռիի և Ախալքալաքի գավառների խնդիրներին: Չայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու չեզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի)

շրջանները Հայաստանի ՄԽՀ-ին միացնելու հարցը տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և վերջինիս եզրակացությունը ներկայացնել Կոմբյուրոյի պլենումի քննարկմանը: Եվ ինչպես գիտենք, Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի առաջարկը: Հատկանշական է, որ վրաց ղեկավարությունն իր այդ որոշումը հիմնավորում էր գրեթե նույն պատճառաբանությամբ, ինչ որ հուլիսի 5-ի նիստում արվել է Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու ժամանակ, այն է՝ տնտեսական կապի շինծու պատճառաբանությամբ: Այսպես՝ հուլիսի 16-ի Վրաստանի կոմկուսի կողմից ընդունված որոշման մեջ ասված էր. «Ելնելով քաղաքական նկատառումներից, ինչպես նաև Ախալքալաքի շրջանի Թիֆլիսի հետ տնտեսական կապից, հայկի առաջարկությունը համարել անընդունելի»[10]: Այս երկու որոշումների մեջ նմանությունը բարձրացնելով Ա.Մելքոնյանը իրավացիորեն տեսնում է վրաց-մահմեդական ձևավորված համերաշխություն հայկական հողերի հարցում: Այսպես՝ պատմաբանը նշում է, որ հուլիսի 4-ի երեկոյան, կամ հուլիսի 5-ի լույս գիշերը Նարիմանովը ստացել էր Կոմբյուրոյի վրացի անդամների համաձայնությունը (որոնց միացել էին նաև Կիրովը և Ի.Ստալինը) իրեն պաշտպանելու դեպքում Ղարաբաղի հարցում հակահայկական դիրքորոշում ընդունելու դեպքում՝ այն է հուլիսի 7-ի Կոմբյուրոյի նիստում փոխադարձաբար օգնել վրացիներին Ախալքալաքի և Խրամի հարցը Վրաստանի կոմկուս տեղափոխելու և դրանով իսկ հօգուտ Վրաստանի լուծելու հարցում:

Ազերի պատմագրությունը ևս փաստում է այս ներքին կապը: Այսպես՝ ոմն Հասանլըն իր աշխատության էջերում գրում է, հուլիսի 7-ի Կոմբյուրոյի նիստում որոշվեց Ախալքալաքի և Խրամի գավառների հարցը տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և նույն օրը կայացնել Վրաստանի կոմկուսի պլենում և քննարկվեց Նարիմանովի հայտարարությունն այն մասին, (իմիջիայլոց նշված է հուլիսի 5-ի հայտարարություն), որ Վրաստանում մուսուլման բնակչության շրջանում անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքները: Եվ այդ ուղղությամբ օգտագործել Օմար Ֆաիզա Նեմանգադեին: Ինչ աշխատանքների մասին է ակնարկում ադրբեջանցի պատմաբանը, չի ասվում[11]: Միաժամանակ հուլիսի 7-ի Վրաստանի կոմկուսի կենտկոմի պլենումի նիստում օրակարգի հարց բարձրացվեց «Վրաստանի մուսուլմանների հարցերով զբաղվող ժողկոմ-խորհի ստեղծման մասին»:

Ինչպես նկատում ենք հայկական հողերի քննարկման նպատակներով կուսակցական մակարդակներով հրավիրվող այս նիստերում միանգամայն ակնհայտ կերպով ձևավորվում է վրաց-մահմեդական կապ: Նարիմանովի հայտարարությունն այն մասին, որ Վրաստանի մուսուլման բնակչության շրջանում հարկավոր է ուժեղացնել աշխատանքները, մեր կարծիքով, խոսքը վերաբերում է վերջիններիս մոտ հակահայկական տրամադրություններ մտցնելու և հայկական հողերի հարցում վրացամետ դիրքորոշում արմատավորելու հարցին:

Եվ այսպես Լեռնային Ղարաբաղը տրվեց Ադրբեջանին: 1921թ. հուլիսի 19-ի Ադրբեջանի Կենտրոնական գործադիր կոմիտեի նիստում Նարիմանովը հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղը մնում է Խորհրդային Ադրբեջանի անբաժանելի մաս՝ ներքին ինքնակառավարման իրավունքով սովետական սահմանադրության շրջանակներում»: Հայ ժողովուրդը միահամուռ դեմ գնաց այդ անօրինական որոշմանը: ՀՎ(Բ)Կ կենտկոմի բյուրոն իր՝ 1921թ. հուլիսի 26-ի որոշման մեջ հուլիսի 5-ի որոշումը որակեց որպես հիմքից սխալ[12]:

Ադրբեջանական կողմը լավ էր գիտակցում հուլիսի 5-ի որոշման անօրինականությունը, և դա է պատճառը, որ ձեռնամուխ է լինում այսպես կոչված բացատրական

աշխատանքների իրականացմանը: Այդ գործին ձեռնամուխ է լինում Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահ և արհմիությունների խորհրդի նախագահ Լևոն Միրզոյանը և հանրապետության ռազմածովային ուժեր իկոմիսար Կարակը: Հայ գործիչները հասկանում էին, որ ստեղծված պայմաններում գոնե ինչ-որ չափով հուլիսի 5-ի ապօրինի որոշումը մեղմացնող հանգամանք կարող էր դառնալ լայն ինքնավարության տրամադրումը: Այսպես՝ Լևոն Միրզոյանը առաջարկում էր շուտափույթ իրականացնել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը, ամբողջ Լեռնային Ղարաբաղը առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր, որը պետք է ենթարկվեր Բաքվին: Ադրբեջանական պատմագիտությունը նախատրամադրվածություն է տեսնում Լևոն Միրզոյանի որդեգրած դիրքորոշման մեջ: Նիֆտալիևը նշում է, որ Շուշիի գավառի 2-րդ տեղամասի խորհուրդների արտահերթ համագումարում Միրզոյանը հանդես է եկել հայտարարությամբ, մի կողմից՝ շեշտելով, թե տնտեսական, հոգևոր, քաղաքական և ազգային տեսանկյունից Ղարաբաղը սերտորեն կապված է Ադրբեջանի կենտրոն Բաքվի հետ, և ճիշտ է Կուլբյուրդի որոշումն Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու որոշումը: Մյուս կողմից էլ նա կոչ էր անում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը պատրաստ լինել պայքարի: Փաստորեն ինչի վրա է ուշադրություն դարձնում Նիֆտալիևը, այն բանի, որ Միրզոյանը փորձ է կատարել, որ Լեռնային Ղարաբաղին տրվեր այնպիսի կարգավիճակ, որպեսզի նա ենթարկվեր հենց Բաքվին՝ դրանք կտրելով Ադրբեջանի մյուս մասերից: Ադրբեջանցի պատմաբանը այստեղ տեսնում է նաև հետևյալ պատճառաբանությունը, հաշվի առնելով, որ Բաքվում պետական իշխանության կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներում առաջավոր դիրքեր են գրավում հայ գործիչները, ապա դրանով հնարավոր կլիներ խուսափել ազգային ընդհարումներից և Լեռնային Ղարաբաղի բնակչության կուլտուրական զարգացման համար կստեղծվեին լայն հնարավորություններ: Լևոն Միրզոյանի այս վճռականությունն ինքնավարության հարցում պատահական չէր: Բանն այն էր, որ Ադրբեջանի իշխանությունները, ի դեմս Նարիմանովի, չնայած հուլիսի 5-ի որոշմանը, հետ էին նահանջում ինքնավարություն շնորհելու դիրքորոշումից: Ադրբեջանական պատմագիտության որոշ ներկայացուցիչներ ինչպիսիք են՝ Զ. և Դ. Գուլիևները հայտնում են այն կարծիքը, թե հուլիսի 5-ի որոշումից հետո Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչությունն ազատորեն արտահայտել է իր կամքը ի շահ Ադրբեջանի, կամ ինչպես նշում է Կոչառլին, թե 1921թ. հոտեմբերի 21-ի Ղարաբաղի պատասխանատու աշխատավորների համագումարում հնչել են ինքնավարությանը դեմ տեսակետներ, այդուհանդերձ նշենք, որ միստերում և համագումարներում արցախահայությունը մշտապես արտահայտել է իր դժգոհությունը և անհամաձայնությունը: Նրանք դեմ էին նույնիսկ ինքնավարությանը, Արցախահայության միակ կամքը միավորվելն էր մայր Հայաստանի հետ: Ադրբեջանցի հեղինակներից մեկի մոտ կարդում ենք. «1921թ. հոկտեմբերի 19-ի Շուշիի գավառի 2-րդ տեղամասի համագումարում ելույթ ունեցող հայ պատվիրակները, ասես նախօրոք մշակված սցենարով, դեմ արտահայտվեցին Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղը թողնելուն»: Հարցի վերաբերյալ ելույթ ունեցողների հիմնավորումներն հետևյալն էին[13]. Հայերի մշակութային մակարդակը ավելի բարձր է, քան ադրբեջանցիներինը, որոնք ի վիճակի չեն նույնիսկ ինքնակառավարվելու: Ելույթ ունեցող հայկական կողմի ներկայացուցիչները ադրբեջանցի կոմունիստներին մեղադրում էին նաև ազգայնամոլության մեջ:

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրվեց ոչ Ադրբեջանի իշխանությունների ցանկությամբ, ընդհակառակը Նարիմանովը թե՛ Բաքվում և թե՛ Մոսկվայում ամեն կերպ դիմադրում էր և ձգտում ծախողելու հարցը: Դարձյալ տեղ գտան այսպես կոչ-

ված մաքրման աշխատանքներ: Աղբբեջանական շովինիզմի դեմ պայքարող ուժերը ուրակվեցին որպես ազգայնական և խնդիր դրվեց նրանց վերացնելու: Ներքին գործերի նախարար Բաղիրովի բանդաներին զոհ գնացին բազմաթիվ հայեր: Եվ այսպես՝ Աղբբեջանի սադրանքների արդյունքում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն անընդհատ ձգձգվում էր, ակնհայտ էր, որ աղբբեջանական կողմը փորձում էր չիրականացնել ինքնավարության որոշումը: 1921թ. սեպտեմբերի 26-ի Աղբբեջանի Կենտրոնական կոմկուսի կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի նիստում որոշվեց «Խնդրել կոմբյուրոյին վերանայել Լեռնային Ղարաբաղին ինքնավար միավոր առանձնացնելու որոշումը և մինչ այդ ոչ մի ինքնավարություն չհռչակել»:

Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցը դիտարկվեց 1922թ. դեկտեմբերի 14-ի Անդրերկրկոմի պլենումում, որտեղ, հիմք ընդունելով ՌԿ(Բ)Կ Կոմբյուրոյի հուլիսի 5-ի որոշումը, որոշում ընդունեց ստեղծել հատուկ հանձնաժողով Լեռնային Ղարաբաղի գործերով՝ Արմենակ Կարակոզովի գլխավորությամբ: Աղբբեջանի Կոմկուսի Կենտկոմի որոշմամբ Աղբբեջանը ժողկոմխորհին կից ստեղծված հանձնաժողովում ընդգրկված էին Կիրովը, Միրզաբեկյանը և Կարակոզովը:

Աղբբեջանական պատմաբանը հրապարակել է հանձնաժողովի որոշումը հայերի-ծանր կացության մասին, ինչը, միտումնավորության դիրքերից ելնելով, վերջինս համարում է չափազանցեցված: Հանձնաժողովի ուսումնասիրություններում ասվում է, որ դաշտային Ղարաբաղը բնակեցված է աղբբեջանական թուրքերով, որոնք քոչվորական կյանք են վարում, ունեն աննշան գրագիտության տոկոս, դրան հակառակ, Լեռնային Ղարաբաղի, որտեղ հայ բնակչությունն է, գրագիտության մոտ 50%-ով և բարձր աստիճանի աշխատավորությամբ: Ցույց էր տրված հայ բնակչության ծանր սոցիալ-քաղաքական կացությունը, ինչը Նիֆտալիևը համարում էր չափազանցություն:

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցում Աղբբեջանը բռնել էր մերժողական կեցվածք, և միայն հայ քաղաքական գործիչների ակտիվ գործելաձևի պայմաններում հնարավոր դարձավ իրականություն դարձնել ինքնավարության պահանջը: 1923թ. հուլիսի 27-28-ը տեղի ունեցած Անդրերկրկոմի պլենում, լսելով Ղարաբաղի կոմիտեի անդամներ Սուրեն Շադունցի և Արմենակ Կարակոզովի զեկուցումը, հանձնարարեց Աղբբեջանի կոմկուսի կենտկոմին ստեղծել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Ելնելով այդ որոշումից՝ Անդրկոմկուսի կենտկոմի նախագահությունը 1923թ. հուլիսի 1-ին լսելով «Ղարաբաղի մասին» հարցը՝ Անդրկենտգործկոմին առաջարկեց նախագահության անունից հռչակագիր հրապարակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարության մասին՝ Խանքենդի կենտրոնով: Ստեղծվեց մարզային կուսակցական կոմիտե, որի քարտուղար է հաստատվում Հայաստանից գործուղված Սերո Մանուցյանը: Ինքնավար մարզը ժամանակավոր կառավարելու համար ստեղծվում է 5 հոգուց բաղկացած հեղափոխական կոմիտե, որին հանձնարարվում է նախապատրաստել և 2 ամսվա ընթացքում հրավիրել ինքնավար մարզի խորհուրդների համագումար: Հեղկոմի նախագահ է հաստատվում Արմենակ Կարակոզովը: Ստեղծվում է հանձնաժողով Կարան (նախագահ), Կարակոզով, Սվիրիդով, Իլդրոմ, Բունիաթզադեն, որին հանձնարարվում է որոշել ինքնավար Ղարաբաղի սահմանները, Քրդստանի վիճակը և Հարթավայրային Ղարաբաղի վարչական սահմանները: Եվ այսպես՝ 1923թ. հուլիսի 7-ին Աղբբեջանի կենտգործկոմը հրապարակեց հռչակագիր Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ստեղծման մասին: Հռչակագրում ասված էր.

1/ Լեռնային Ղարաբաղի հայկական մասից ձևավորել ինքնավար մարզ, որպես ԱդրխՍՀ-ի բաղկացուցիչ մաս՝ Խանկենդի կենտրոնով:

2/ Ինքնավար մարզի կառավարման մարմիններն էին մարզային գործադիր և տեղական խորհուրդները:

3/ Մինչև գործադիր կոմիտեի ձևավորումը ստեղծել ժամանակավոր հեղափոխական կոմիտե: Կա էական հասկացություն 1921թ. հուլիսի 5-ի որոշումների և 1923թ. հուլիսի 7-ի որոշումների միջև: Խախտելով ՌԿ(Բ)Կ Կոմբյուրոլի որոշումը՝ Ադրբեջանի կենտգործկոմը որոշեց մարզը ստեղծել «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից»: Մինչդեռ 1921թ. հուլիսի 5-ի որոշման մեջ ասված էր. «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն Շուշի կենտրոնով»:

Այսինքն՝ 1923թ. որոշվեց ոչ թե ինքնավարություն շնորհել ամբողջ Լեռնային Ղարաբաղին (ինչպես ասված էր 1921թ. հուլիսի 5-ի որոշման մեջ), այլ նրա հայկական մասին: Արդյունքում Լեռնային Ղարաբաղի շուրջ 12 հազար ք/կմ տարածքից ստեղծվեց 4,4 հազար ք/կմ տարածք ընդգրկող ԼՂԻՄ-ը[14]:

Ադրբեջանցի պատմաբան Նիֆտալիևը, կոպիտ կերպով կեղծաբանելով 1923թ. հուլիսի 7-ի որոշումը, հուլիսի 5-ի որոշման հանդեպ ակնհայտ ադրբեջանամետ բովանդակությունը գրում է, թե որոշվեց ինքնավարություն տալ ոչ թե Լեռնային Ղարաբաղի հայկական մասին, այլ հայ բնակչությանը, իսկ այստեղ, ինչպես նշում է պատմաբանը, ապրում էին և ադրբեջանցիներ: Միանգամայն ակնհայտ է և հետագա դեպքերից որ ադրբեջանցի պատմաբանի այս ստահող հայտարարությունը 1923թ. հուլիսի 7-ի մասին գուրկ է հիմքերից:

Մարզից դուրս թողնվեց հարակից Շահումյանի, Խանլարի, Քարհատի ու Շամքորի, Քարվաճառի, Քաշաթաղի և Լեռնային Ղարաբաղի հարավային շրջանները: 1923թ. օգոստոսի 6-ին Անդրկենտգործկոմը հրապարակեց մի հրաման, ըստ որի որոշվեց ստեղծել Ադդամի, Ջեբրայիլի և Քրդստանի գավառները: Նպատակը մեկն էր՝ Ինքնավար մարզը կտրել Խորհրդային Հայաստանի հետ ընդհանուր որևէ սահմանագծից և այն օղակել թուրքական դարձրած շրջաններով: Սկզբում մարզը կրում էր «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մարզ» անունը, որը 1936թ. վերափոխվեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ»: Մարզի անվանման մասին ադրբեջանցի պատմաբաններ Մուսաևը և Մամմադովան իրենց աշխատությունում, անդրադառնալով մարզի անվանման աշխարհագրական, այլ ոչ թե էթնիկական բնույթի մասին, գրում են, թե «ԽՍՀՄ-ում ինքնավար վարչամիավորները կրել են էթնոսի, այլ ոչ թե աշխարհագրական տարածքի անվանումը, քանի որ հայերն արդեն ինքնորոշվել են Հայաստանում, ապա Ադրբեջանում նույնն արդեն անհիմն է»: Փաստորեն բոլոր մակարդակներով պարզ երևում է, որ Ադրբեջանը դեմ էր ինքնավարությանը նույնիսկ այն խղճով սահմաններում, որ տրվեց Լեռնային Ղարաբաղի հայությանը: Այսպես Նարիմանովը գրել է, թե «իմ օրոք ինքնավարություն չտրվեց, ոչ թե այն պատճառով, որ ես դեմ էի, այլ այն պատճառով, որ հայ գյուղացիությունն էր դեմ դրան»:

Եվ այսպես՝ ապօրինաբար պանթուրքիզմի գաղափարախոսության հետևորդ Ադրբեջանը հակաիմպերիալիզմի կեղծ դրոշի ներքո իրեն բռնակցեց Լեռնային Ղարաբաղը և նրա մի մասին շնորհեց ինքնավարություն, որն իր հերթին արցախահայության հետևողական պայքարի արդյունք էր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Եր., 2000, էջ 287:
2. Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян /20-е годы 20-ого века/, Б., 2010, стр. 111.
3. Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 286:
4. Ուլուբաբյան Կ., Արցախի պատմություն, Եր., 1994, էջ 243:
5. Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 288:
6. Ուլուբաբյան Կ., նշվ. աշխ., էջ 244:
7. Кочарли Т., К истории карабахского вопроса, М., 2009, стр. 125.
8. Нифталиев И., указ. работа, стр. 116.
9. ԼՂՀ, անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2006, էջ 153:
10. Гасанлы Д., История дипломатии Азербайджанской республики, М., 2013, стр. 239.
11. Нагорный Карабах 1918-1923гг., документы и материалы, Ер., 2000, стр. 651.
12. Нифталиев И., стр 119.
13. Гасанлы Д., стр. 145.
14. «21-րդ դար», թիվ 4, 2014, էջ 31:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արցախյան հիմնահարցը 1921-1923թթ. պատմական որոշումներում. Ադրբեջանական պատմագիտության խեղաթյուրումները Արմինե Առստամյան

Հոդվածում քննարկվում են 1921-1923թթ. պատմական կարևոր որոշումներն արցախահայության մասին: Ցույց է տրվում Ադրբեջանի նվաճողական կեցվածքը բուն հայկական հողերի նկատմամբ: Փորձ է կատարվում վեր հանել այն քաղաքական պայմանները, որոնց ազդեցությամբ տեղի ունեցավ Արցախի բռնակցումը Ադրբեջանին: Հանգամանորեն վեր է լուծվում 1921թ. հուլիսի 4-ի հայանպաստ և 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի անօրինական որոշումները: Հոդվածում քննարկվում են նաև Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցերը և ԼՂԻՄ-ի կազմավորման մասին 1923թ. հուլիսի 7-ի որոշումը: Հիշյալ հիմնահարցերը վեր հանելիս հեղինակը անդրադառնում է նաև պատմության ադրբեջանական կեղծաբաններին:

Բանալի բառեր՝ նվաճողական քաղաքականություն, Արցախ, Ադրբեջան, հայկական հողեր, որոշում, ինքնավարություն, բռնակցում:

РЕЗЮМЕ

**Карабахский конфликт в исторических решениях 1921-1923гг.:
искажение истории азербайджанцами
Армине Арустамян**

В статье обсуждаются исторически важные решения 1921-1923гг., касающиеся армян Арцаха. Показаны захватнические позиции Азербайджана, завоевания армянских территорий. Автор пытается указать на политические условия, под влиянием которых произошло принудительное соединение Арцаха с Азербайджаном. Тщательно рассматриваются решения

Кавбюро от 4 и 5 июля 1921 года. В статье также обсуждаются вопросы автономии Нагорного Карабаха и решение от 7 июля 1921 года о формировании Нагорно-Карабахской автономной области.

Ключевые слова: захватническая политика, Арцах, Азербайджан, армянские территории, решение, автономия, принудительно соединять.

SUMMARY

The Karabakh Conflict in Historic Decisions of 1921-1923: The Distortion of History by the Azerbaijanians Armine Arstamyan

The article discusses historically important decisions in 1921-1923 regarding the Armenians of Artsakh. It shows grabbing policy towards the Armenian territories. An attempt is made to raise those political conditions, under which the joining of Artsakh to Azerbaijan took place. The article touches upon the decisions of the Caucasus bureau dating to 4th of July 1921, which were favorable for the Armenians and the decisions dating to 5th of July 1921, which were illegal. The article also discusses the issues of autonomy of Nagorno-Karabakh and the decision of the 7th of July 1923, regarding the formation of Nagorno-Karabakh Autonomous Region.

Keywords: *land-grabbing policy, Artsakh, Azerbaijan, armenian territories, autonomy, forcibly connect.*